Տերանց, պահպանել զԲրիստոսապատակ Կայսրդ ի վերայ Գահոյիցդ յամս յամայր՝ յերջանկութիւն բազմամիլիոն հպատակացդ և ի փառս Մեծին Ռուսիոյ։

Մկրտիչ Կաթուղիկոս
Ամենայն Հայոց.

Նորին Ս. Օծութիւն ազգիս Վեհափառ Հայրապետը շրջաբերական կոնդակաւ յանուն Կիլիկիոյ Ս. Կաթուղիկոսին, Կ. Պոլսոյ և Երուսաղէմի Ամեն. պատրիարքներին, որպէս և Եւրոպիոյ, Ամերիկայի, Պարսկ. և Հնդկաստանի և Ատրպատականի Առաջնորդներին, հրամայեց ներկայ յունիս ամսուն, ս. Էջմիածնի տօնի օրը, առանձին եկեղեցական հանդիսաւորութեամբ տօնել՝ իբրև Հայաստ. Կաթուղիկէ Մայր Տաճարի կառուցման և հաստատութեան հարար վեցհարիւրամեակի յիշատակ։

Ս. Սինոդի անդամ Գեր. Տ. Յուսիկ եպս.-ը իւր տկարութեան պատճառաւ հրաժարական մատուցած լինելով Ս. Հայրապետին, յայտնուեց այդ մասին ուր հարկն էր և բարձրագոյն հրամանաւ Սրբազանը ազատ համարուեց Սինոդի անդամութեան պաշտօնից։ Նա կմնայ ուրեմն այսուհետև միայն վանահայր ս. Հռիփսիմէի վանուց։

ՄԱՅՐ ԱԹՈՌ.

Տ. Անտոն վարդապետ, որ վարել է գանձապան պաշտօնները թէ Մայր Աթոռում և թէ դրսի վանքերում,

Հայրապետական սրբատառ կոնդակով նշանակուեցաւ Գանձասարի վանքի վանահայր ցմահ։

Տ. Տիրայր վարդապետի փոխարէն Աղէքսանդրապոլի վիճակի փոխանորդ նշանակուեցաւ Տ. Սահակ վարդ. Բաղդասարեանը, որ ուղևորուեցաւ իւր պաշտօնատեղին մայիսի 10-ին։

Ս. Համբարձման առնին, Թելէֆի վանքի ուխտի եկամուտի վրայ հսկելու համար Սինոդը կարգեց Բար. Մեսրոպ աբ. Մաքսուտեանին, տալով նրան գործակիցներ՝ Բարեկրօն Արշակ քահ. Մինասեանին և Շնորհ. Սարգիս սարկ. Խուցեանին։

Կարսի փոխանորդ Տ. Կիւրեղ վարդապետը, մի քանի օր Մայր Աթոռում մնալուց և իւր վիճակի գործերի մասին Վեհափառ Հայրապետից կարևոր հրահանգներ ստանալուց յետոյ՝ մայիսի 4-ին վերադարձաւ իւր պաշտօնատեղին։

ՁԵՄԱՐԱՆ Մ. ԱԹՈՌՈՑ

Ձեմարանում քննութիւնները սկսուեցան ապրիլի 14-ից և վերջացան մայիսի 31-ին։